

Կ Ա Ր Գ

ԱՐՏՈՆԱԳՐՎԱԾ ԱՂԲԱՎԱՅՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են կոշտ կենցաղային թափոնների արտոնագրված աղբավայրերում և դրանց ազդեցությանը ենթարկվող հարակից տարածքի՝ սանիտարական պահպանման գոտու սահմաններում շրջակա միջավայրի վիճակի և դրա աղտոտվածության մոնիթորինգի (այսուհետ՝ աղբավայրի մոնիթորինգ) ծրագրի մշակման, իրականացման և շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմին (այսուհետ՝ լիազոր մարմին) մոնիթորինգի արդյունքների ներկայացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում օգտագործվող հասկացությունները կիրառվում են այն իմաստներով, որոնք սահմանված են «Թափոնների մասին» օրենքով:

3. Սույն կարգի դրույթները տարածվում են՝

1) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված աղբավայրերի կազմակերպումը որպես նախատեսվող գործունեություն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում իրականացնող և փորձաքննության ներկայացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց վրա.

2) Վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզիաների հիման վրա աղբավայրերը շահագործող (այսուհետ՝ աղբավայրը շահագործող) ու տնօրինող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի վրա, որոնք իրավասու և պատասխանատու են աղբավայրում թափոնները տեղադրելու, այդ թվում՝ թաղելու համար:

4. Աղբավայրերի մոնիթորինգը նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունում ներառված մոնիթորինգի (մշտադիտարկման) ծրագրով նախատեսված և պարբերաբար իրականացվող գործողությունների համախումբ է, ինչը ներառում է աղբավայրերում և դրանց հարակից տարածքներում ակնադիտարկումների, գործիքային չափումների, նմուշառումների, լաբորատոր փորձարկումների միջոցով հողի, մթնոլորտային օդի, մակերևութային և ստորերկրյա ջրերի որակական ցուցանիշների վերաբերյալ տվյալների պարբերական հավաքագրումը և դրանց արդյունքում ստացված տվյալների մշակումը: Աղբավայրում թափոնների ինքնայրման օջախներ և հետքեր արձանագրվելու դեպքում աղբավայրերի մոնիթորինգը ներառում է նաև այրման արդյունքում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների քանակական և որակական ցուցանիշների որոշումը:

5. Աղբավայրը շահագործողներն ու տնօրինողներն աղբավայրի մոնիթորինգն իրականացնում են փորձարկման լաբորատորիաների կամ շրջակա միջավայրի մոնիթորինգի իրականացման իրավասություն ունեցող մասնագիտացված կազմակերպությունների միջոցով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն որոշմամբ սահմանված կարգով:

6. Աղբավայրերի տարածքում մոնիթորինգի իրականացման նպատակն է մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա աղբավայրի վնասական ներգործության և դրա հետևանքների բացահայտումը, կանխարգելումը կամ նվազեցումը:

7. Աղբավայրի տարածքում իրականացվող մոնիթորինգի խնդիրներն են պարզել ու արձանագրել հետևյալը՝

1) աղբավայրի տարածքում իրականացվող գործողությունների համապատասխանությունն օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերին.

2) շրջակա միջավայրի աղտոտումը կանխող համակարգերի օգտագործման արդյունավետությունը.

3) կառուցվող աղբավայրի համար «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված պահանջների կատարումը և նախագծային փաստաթղթերին համապատասխանությունը.

4) աղբավայրի շահագործումը թույլատրող փաստաթղթերով սահմանված պահանջների կատարումը:

8. Կառուցվող աղբավայրի մոնիթորինգի ենթակա տարածքի սահմանները նկարագրվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացված՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում՝ հաշվի առնելով նաև աղբավայրի կառուցմանը և շահագործմանն առնչվող քաղաքաշինական, սանիտարական, հակահամաճարակային, հակահրդեհային և բնապահպանական կանոններն ու նորմերը: Աղբավայրի մոնիթորինգի ենթակա տարածքի սահմանները ճշգրտվում են՝ հիմնվելով աղբավայրի տարածքում շրջակա միջավայրի վիճակի և աղտոտման նկատմամբ իրականացվող ինքնահսկման և մոնիթորինգի, ինչպես նաև աղբավայրի շահագործման և պահպանության ընթացքում սանիտարական, հակահամաճարակային, բնապահպանական, հակահրդեհային, քաղաքաշինական պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության արդյունքում արձանագրված տվյալների վրա:

9. Աղբավայրը շահագործողների կողմից մշակվում է աղբավայրի մոնիթորինգի ծրագիր՝ ուղղված աղբավայրի վիճակի փոփոխությունների ուսումնասիրմանը և գնահատմանը: Եթե աղբավայրի շահագործողները մեկից ավելի են, ապա մշակվում է աղբավայրի մոնիթորինգի համատեղ ծրագիր:

10. Աղբավայրի մոնիթորինգը ներառում է միջոցառումներ՝ հետևյալ ժամանակահատվածների համար՝

1) աղբավայրի կառուցմանը նախորդող ժամանակահատվածում՝ աղբավայրի կառուցման համար նախատեսված և դրա հնարավոր ազդեցությանը ենթակա տարածքների մթնոլորտային օդի, հողի և ջրերի վերաբերյալ տվյալների (ֆոնային տվյալներ) հավաքագրում.

2) աղբավայրի շահագործման ընթացքում՝

ա. շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգի իրականացում՝ պարզելու համար աղբավայրի շահագործման ընթացքում վնասակար նյութերի արտանետումների և արտահոսքերի որակական ու քանակական բնութագրիչների համապատասխանությունը մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութի սահմանային թույլատրելի արտանետման նորմատիվներին, կեղտաջրերով ջրային ռեսուրսներ թափվող վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի նորմաներին, հողն աղտոտումից պահպանելու ընդհանուր պահանջները, հողն աղտոտող վնասակար նյութերի ցանկն ու հողերի աղտոտվածության աստիճանի գնահատումը սահմանող կարգին, ինչպես նաև հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջները հաստատող սանիտարական կանոններին և նորմերին,

բ. աղբավայրում տեղադրվող թափոնների քանակական և որակական բնութագրիչների ուսումնասիրում և արձանագրում,

գ. աղտոտող նյութերի արտանետման կամ արտազատման դեպքերի արձանագրում համապատասխան միջոցներ ձեռնարկելու նպատակով,

դ. թափոնների ոչ կանխամտածված այրման (ինքնայրում) դեպքերի կանխարգելման և արձանագրման նպատակով մոնիթորինգի իրականացում.

3) աղբավայրի շահագործման ավարտից հետո առնվազն հինգ տարվա ընթացքում աղբավայրի մոնիթորինգի իրականացում՝ պարզելու համար, որ աղբավայրի փակումը և տարածքի վերականգնմանն ուղղված աշխատանքներն իրականացվել են տվյալ աղբավայրի փակման ծրագրին համապատասխան, և այն այլևս վտանգ չի ներկայացնում շրջակա միջավայրի և հարակից տարածքների բնակչության առողջության համար:

11. Աղբավայրը շահագործողներն իրենց կողմից շահագործվող աղբավայրի տարածքում իրականացված մոնիթորինգի արդյունքները ներառում են «Թափոնների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ և 16-րդ հոդվածի 2-րդ մասերով սահմանված շրջակա միջավայրի ոլորտում պետական կառավարման լիազորված մարմին ներկայացվող Թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծի և Թափոնների հեռացման վայրերի ռեստորային գրանցման թերթիկի համապատասխան բաժիններում:

12. Թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագիծը շրջակա միջավայրի ոլորտում պետական կառավարման լիազորված մարմին ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 9-ի N 2291-Ն, իսկ թափոնների հեռացման վայրերի ռեեստրային գրանցման թերթիկը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի N 1180-Ն որոշումներով սահմանված կարգերով:

2. ԱՂԲԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԾՐԱԳԻՐԸ

13. Աղբավայրերի մոնիթորինգի ծրագրի մշակման նպատակն աղբավայրերի հսկողության, կանխարգելիչ և պաշտպանական միջոցառումների սահմանումն է՝ ուղղված կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում շրջակա միջավայրի բաղադրիչներին և մարդու առողջությանն սպառնացող վտանգների կանխարգելմանը կամ վերացմանը: Մոնիթորինգի ծրագիրը մշակվում է աղբավայրի տարածքում շրջակա միջավայրի վիճակի և աղտոտվածության վերաբերյալ առկա տվյալների, ինչպես նաև հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումների հիման վրա:

14. Մոնիթորինգի ծրագրի կազմման համար հիմք են հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում թափոնների կառավարման, աղբահանության և սանիտարական մաքրման, բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտները կանոնակարգող օրենսդրությունը, ինչպես նաև հետևյալ տվյալները, տեղեկությունները և տվյալ աղբավայրի կառուցման տեխնիկական լուծումները (առանձնահատկությունները)՝

1) աղբավայրի կառուցման և շահագործման համար մշակված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունների և նախագծային փաստաթղթերի տվյալները.

2) տեղեկատվական պահոցներում առկա ֆոնդային տվյալները՝ աղբավայրի տարածքում շրջակա միջավայրի վիճակի և աղտոտվածության վերաբերյալ.

3) աղբավայրի կառուցման վայրում շրջակա միջավայրի ֆոնային վիճակի մասին տվյալները՝ հավաքագրված մինչև աղբավայրի կառուցումը.

4) աղբավայրը շահագործողների մոտ առկա տվյալները՝ աղբավայրի տարածքում շրջակա միջավայրի վիճակի և աղտոտվածության վերաբերյալ.

5) տեղեկություններ՝ աղբավայրի սանիտարական պահպանման գոտու սահմաններում առկա և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցող այլ աղբյուրների և օբյեկտների վերաբերյալ.

6) աղբավայրի դասը (տեսակը).

7) աղբավայր տեղափոխվող և տեղադրվող թափոնների վտանգավորության դասը, տարեկան քանակը.

8) աղբավայրի գտնվելու վայրի ֆիզիկաաշխարհագրական բնութագրերը.

9) աղբավայրի տարածքի երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները.

10) թափոնների տեսակավորում իրականացնելու հնարավորությունը.

11) թափոնների մշակում, վերամշակում կամ օգտահանում իրականացնելու հնարավորությունները՝ ներառյալ կոմպոստացումը, կենսազազի արտադրությունը.

12) աղբավայրում թափոնների թաղման եղանակը.

13) թափոններից անջատվող հեղուկի (այսուհետ՝ գտահեղուկ) հավաքման դրենաժային համակարգի տեսակը.

14) գտահեղուկից նստվածքի առանձնացման և թաղման առանձնահատկությունները.

15) գտահեղուկի պարզվածքը հակահրդեհային նպատակով թափոնների խոնավացման համար օգտագործելու հնարավորությունը, իսկ դրա բացակայության դեպքում՝ հակահրդեհային կանխարգելիչ միջոցառումների առանձնահատկությունները.

16) աղբավայրում առաջացող մեթան գազի հավաքման և հեռացման համակարգի ստեղծման հնարավորությունը.

17) աղբավայրի տարածք ստորերկրյա և մակերևութային ջրերի ներհոսքի հավանականությունը և դրա կանխարգելման հնարավոր եղանակները.

18) քամիների գերակշռող ուղղությամբ բնակավայրի, արտադրական, սպասարկման կամ հասարակական օբյեկտների առկայությունը.

19) աղբավայրի տեղադիրքի հետ կապված, շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող այլ գործոններ:

15. Կառուցվող աղբավայրի մոնիթորինգի ծրագիրը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի, ներառվում է նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունում և ներկայացվում լիազոր մարմին՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացություն ստանալուց հետո նախատեսվող գործունեությունը նախաձեռնողի կողմից աղբավայրի մոնիթորինգի ծրագրի օրինակը մեկ ամսվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով կամ առձեռն փոխանցվում է աղբավայրը տնօրինողին և շահագործողին, եթե վերջիններս տարբեր իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերեր են:

16. Աղբավայրերի շահագործման ընթացքում, ինչպես նաև դրանց ժամանակավոր դադարեցման կամ փակման դեպքում շրջակա միջավայրի համար վնասակար ազդեցության ռիսկերը կապված են հիմնականում հետևյալ գործոնների հետ՝

1) վնասակար նյութերի, այդ թվում՝ ֆուրանի, դիօքսինների, ջերմոցային գազերի (օրինակ՝ մեթան, ածխածնի օքսիդ, ածխածնի երկօքսիդ) արտանետումը մթնոլորտային օդ և դրանց արագ տարածումը շրջակա միջավայրում.

2) թափոններից արտազատվող հեղուկի կամ դրանց հետ շփման արդյունքում աղտոտված ջրերի ներթափանցումը հողի մեջ.

3) աղբավայրի տարածքում մթնոլորտային տեղումներից գոյացող, ինչպես նաև տեղադրված թափոններից արտազատվող հեղուկի ներհոսքն ստորերկրյա և մակերևութային ջրեր.

4) աղբավայր տեղափոխված թափոնների, դրանցից անջատվող արտանետումների և արտազատումների վնասակար ներգործությունն աղբավայրի

շահագործման աշխատանքներում ներգրավված և հարակից տարածքներում գտնվող մարդկանց առողջության և կենսագործունեության վրա.

5) աղբավայր տեղափոխված թափոնների, դրանցից անջատվող արտանետումների և արտազատումների վնասակար ներգործությունը աղբավայրի տարածքում գտնվող բուսական ու կենդանական աշխարհի վրա:

17. Աղբավայրի մոնիթորինգի ծրագրով սահմանված ժամկետի ավարտից և սահմանված կարգով աղբավայրի փակումից հետո առնվազն հինգ տարվա ընթացքում մոնիթորինգի իրականացման, շրջակա միջավայրի վրա աղբավայրի վնասակար ազդեցության կանխարգելման և ստեղծված իրավիճակում համապատասխան միջոցների ձեռնարկման համար պատասխանատու հանդիսանում է աղբավայրը տնօրինողը:

3. ԱՂԲԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

18. Մոնիթորինգի ծրագրում ներառվում են հետևյալ տվյալներն ու տեղեկությունները, ըստ բաժինների՝

1) «Ընդհանուր տեղեկություններ թափոնների տեղադրման օբյեկտի մասին» բաժնում ներկայացվում են տվյալներ՝ աղբավայրը շահագործող իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ, աղբավայրի գտնվելու վայրի, հողամասի տնօրինման իրավունքի, աղբավայրի մակերեսի, աղբավայրի սանիտարական պահպանման գոտու չափերի և աղբավայրի շահագործման նախատեսվող ժամանակահատվածի վերաբերյալ.

2) «Մոնիթորինգի ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչների ընտրության հիմնավորումը» բաժնում ներկայացվում են՝

ա. աղբավայրի տարածքում մթնոլորտային օդի, մակերևութային և ստորերկրյա ջրերի, հողի վիճակի և աղտոտվածության վերաբերյալ ֆոնային տվյալները,

բ. աղբավայրի շահագործման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների՝ մթնոլորտային օդի, մակերևութային և ստորերկրյա ջրերի, հողի վրա հնարավոր վնասակար ազդեցությունը,

գ. աղբավայրի տարածքում շրջակա միջավայրի կոնկրետ բաղադրիչների նկատմամբ մոնիթորինգ անցկացնելու անհրաժեշտության գնահատման եզրակացությունները՝ սույն ենթակետի «ա» և «բ» պարբերություններում նշված տվյալների հիման վրա.

3) «Աղբավայրի մոնիթորինգի ենթակա ցուցանիշները» բաժնում ներկայացվում են աղբավայրի տարածքում շրջակա միջավայրի բաղադրիչների վիճակը և աղտոտվածությունը բնութագրող, դիտարկման ենթակա ցուցանիշների (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական, այլ) ընտրության հիմնավորումը, որոնց փոփոխությունը հնարավոր է տվյալ օբյեկտում թափոնների տեղադրման արդյունքում: Շրջակա միջավայրի բաղադրիչների դիտարկվող ցուցանիշների ընտրությունը կատարվում է՝ հաշվի առնելով աղբավայրի շահագործմամբ պայմանավորված կանխատեսվող վնասակար ազդեցությունը.

4) «Փորձանմուշների ընտրության վայրերը, գործիքային չափումների անցկացման կետերը» բաժնում ներկայացվում են տվյալներ մթնոլորտային օդի, մակերևութային և ստորերկրյա ջրերի, հողի մոնիթորինգի համար փորձանմուշներ վերցնելու, գործիքային չափումներ անցկացնելու վայրերի կամ կետերի ընտրության հիմնավորվածության վերաբերյալ, ըստ մոնիթորինգի ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչների.

5) «Մոնիթորինգի իրականացման եղանակներն ու պարբերականությունը» բաժնում ներկայացվում են աղբավայրի տարածքում դիտարկումների եղանակների (ակնադիտարկում, ուսումնասիրություն, գործիքային չափում, լաբորատոր փորձարկում, այլ) ընտրության և դրանց անցկացման պարբերականության հիմնավորումները: Աղբավայրի մոնիթորինգի անցկացման համար առաջարկվող նվազագույն պարբերականությունը և ցուցանիշները ներկայացվում են սույն կարգի N 1 աղյուսակում՝

Աղյուսակ N 1

Աղբավայրի մոնիթորինգի անցկացման նվազագույն պարբերականությունը և մոնիթորինգի ենթակա ցուցանիշները

Աղբավայրում մոնիթորինգի ենթակա ցուցանիշները	Դիտարկումների պարբերականությունն	Դիտարկումների պարբերականությունն
---	----------------------------------	----------------------------------

	աղբավայրի շահագործման փուլում	աղբավայրի շահագործումը դադարեցնելու և տարածքի վերականգնման փուլում
1. Թափոններից արտագատված հեղուկի ծավալ	յուրաքանչյուր կիսամյակ	յուրաքանչյուր կիսամյակ
2. Թափոններից արտագատված հեղուկի բաղադրություն	յուրաքանչյուր կիսամյակ	յուրաքանչյուր կիսամյակ
3. Մակերևութային ջրերի բաղադրություն	յուրաքանչյուր կիսամյակ	յուրաքանչյուր կիսամյակ
4. Հնարավոր գազային արտանետումներ՝ CH ₄ , CO ₂ , H ₂ S	յուրաքանչյուր կիսամյակ	յուրաքանչյուր կիսամյակ
5. Ստորերկրյա ջրերի մակարդակ	յուրաքանչյուր կիսամյակ	յուրաքանչյուր կիսամյակ
6. Ստորերկրյա ջրերի բաղադրություն	յուրաքանչյուր կիսամյակ (հաճախականությունը կարող է փոփոխվել՝ կախված տեղանքի պայմաններից)	յուրաքանչյուր կիսամյակ (հաճախականությունը կարող է փոփոխվել՝ կախված տեղանքի պայմաններից)
7. Հողի բաղադրություն	յուրաքանչյուր կիսամյակ	յուրաքանչյուր կիսամյակ

6) «Աղբավայրի մոնիթորինգի արդյունքները» բաժնում ներկայացվում են աղբավայրի մոնիթորինգի արդյունքների մասին տվյալները, որոնք ենթակա են ներկայացման լիազոր մարմնին: Աղբավայրի վերաբերյալ տվյալները և դիտարկումների պարբերականությունը ներկայացվում են սույն կարգի N 2 աղյուսակում: Սույն կարգի 11-րդ կետով սահմանված փաստաթղթերով ներկայացման ենթակա են սույն կարգի NN 1 և 2 աղյուսակներով նախատեսված տվյալները՝

Աղյուսակ N 2

Աղբավայրի վերաբերյալ տվյալները և դիտարկումների պարբերականությունը

Աղբավայրի մոնիթորինգի արդյունքում արձանագրված տվյալները	Դիտարկումների պարբերականությունն աղբավայրի շահագործման փուլում	Դիտարկումների պարբերականությունն աղբավայրի տարածքի վերականգնման փուլում
---	---	---

1. Աղբավայրերի կառուցվածքը և կազմը՝ տեղադրված թափոնների զբաղեցրած մակերեսը, թափոնների քանակն ու բաղադրությունը, թափոնների տեղադրման մեթոդները, աղբավայրի՝ դեռ չզբաղեցված տարողունակության հաշվարկը	տարեկան	
2. Աղբավայրի լցվածության մակարդակի փոփոխությունները, աղբավայրում թափոնների ինքնայրման արձանագրված դեպքերը, այրված տարածքի մոտավոր մակերեսը, այրված թափոնների և դրա արդյունքում արտանետված վնասակար նյութերի՝ ազոտի օքսիդների, դիօքսիդների և ֆուրանների մոտավոր քանակը	տարեկան	տարեկան

7) «Տեղեկատվության աղբյուրներ» բաժնում նշվում են մոնիթորինգի ծրագրի մշակման ժամանակ օգտագործված տեղեկատվության աղբյուրները՝ օգտագործված նորմատիվ իրավական ակտերի, նորմատիվ և կանոնակարգային փաստաթղթերի, գիտական հրապարակումների, այլ փաստաթղթերի ցանկը՝ նշելով դրանց անվանումները, հեղինակներին, հրատարակչությունները, հրապարակման տարեթվերը և այլ տվյալներ.

8) «Հավելվածներ» բաժնում ընդգրկվում են՝

ա. աղբավայրի և դրան հարակից տարածքի սխեման (գլխավոր հատակագիծ, իրավիճակային սխեմա),

բ. նմուշառման վայրերի, դիտարկումների և գործիքային չափումների անցկացման կետերի տեղաբաշխման սխեմաները,

գ. աղբավայրը շահագործողի հայեցողությամբ այլ նյութեր:

19. Մթնոլորտային օդի գործիքային չափումների անցկացման կետերի, փորձանմուշներ վերցնելու վայրերի և դրանց քանակի մասին որոշումն ընդունվում է՝ հաշվի առնելով աղբավայրում տեղադրվող թափոնների քանակը և վտան-

գավորության դասը, տարածքում գերակշռող քամիների ուղղությունները, աղբավայրի տարածքում բնակելի, հասարակական կամ արտադրական շենքերի, շինությունների առկայությունը, աղբավայրին հարակից տարածքներում հողամասերի օգտագործման տեսակները: Մթնոլորտային օդի մոնիթորինգի համար մոնիթորինգի ծրագրով նախատեսվում են օդի նմուշառման կետեր առնվազն աղբավայրի աշխատանքային ու տնտեսական գոտիներում և աղբավայրի սանիտարական պահպանման գոտու սահմաններում:

20. Ստորերկրյա ջրերի գործիքային չափումների անցկացման և փորձանմուշների վերցման կետերի տեղադիրքի մասին որոշումն ընդունվում է՝ հաշվի առնելով աղբավայրի տարածքում ստորերկրյա ջրատար հորիզոնների տեղակայվածությունը և աղբավայրի հիմքը կազմող լեռնային ապարների ջրանթափանցության աստիճանը, աղբավայրի տարածքում ստորերկրյա ջրատար հորիզոնների խորություններն ու սնուցման վայրերը և դրանց բեռնաթափման տարածքների սահմանները:

21. Աղբավայրի տարածքում առկա մակերևութային ջրերի մոնիթորինգի համար ընտրվում են ոչ պակաս, քան երկու կետ, մեկը մինչև աղբավայրը՝ աղբավայրին հարակից բարձրադիր տարածքում գտնվող մակերևութային ջրերից, մյուսը՝ աղբավայրին հարակից ցածրադիր հատվածի ջրահոսքերից:

22. Հողի նմուշառման վայրերն ընտրվում են սանիտարական պահպանման գոտու տարածքում՝ նմուշառման կետերի մեծ մասն ընտրելով տարածքում գերակշռող քամիների ուղղության և աղբավայրին հարակից ցածրադիր հատվածների վրա:

4. ԱՂԲԱՎԱՅՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

23. Աղբավայրի մոնիթորինգի ծրագրով նախատեսված չափումներն իրականացվում են «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքի պահանջների պահպանմամբ:

24. Աղբավայրի մոնիթորինգի համար անհրաժեշտ նմուշառումները և հետազոտությունները կարող են իրականացվել շրջակա միջավայրի տվյալ

բաղադրիչի՝ մթնոլորտային օդի, հողի, մակերևութային և ստորերկրյա ջրերի մոնիթորինգի իրականացման համար ընդունված կարգերին, նորմերին և հսկման մեթոդներին համապատասխան: Հետազոտությունները կարող են կատարվել լաբորատոր պայմաններում, իսկ համապատասխան սարքավորումների առկայության դեպքում՝ անմիջապես աղբավայրի և դրա ազդեցությանը ենթարկվող հարակից տարածքներում:

25. Աղբավայրում տեղադրված թափոններում գոյացող գազային արտանետումների նկատմամբ մոնիթորինգն իրականացվում է աղբավայրի մոնիթորինգի ծրագրով նախատեսված յուրաքանչյուր տեղամասում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ աղբավայրում տեղադրված օրգանական ծագման թափոնների կենսաքայքայման հիմնական պրոցեսն ընթանում է դրական ջերմաստիճանների պայմաններում, ուստի ճշգրիտ արդյունքներ ստանալու համար աղբավայրում գոյացող կենսագազի (CH_4 , CO_2 և այլ գազային խառնուրդ) չափումներն իրականացվում են չոր և տաք (օդի միջին ամսական ջերմաստիճանն առնվազն 8°C) եղանակային պայմաններում:

26. Թափոններից արտագատված հեղուկի ծավալի և բաղադրության որոշման նպատակով իրականացվող նմուշառումն ու չափումներն իրականացվում են գտահեղուկի հավաքման ավազանից կամ տարողությունից և աղբավայրի յուրաքանչյուր տեղամասում, որտեղ դրանք հայտնաբերվել են:

27. Աղբավայրի տարածքում ստորերկրյա ջրերի վիճակի և աղտոտվածության դիտարկումներն անցկացվում են երկրի մակերևույթին մոտ առաջին ջրատար հորիզոնում: Մակերևութամերձ ջրատար հորիզոնում աղտոտվածություն հայտնաբերելու կամ աղտոտվածության տարածման բարձր հավանականության դեպքում ուսումնասիրություններ անցկացվում են նաև ստորին ջրատար հորիզոնում: Չափումներն իրականացվում են ստորերկրյա ջրերի ներհոսքի ուղղությամբ առնվազն մեկ հսկիչ հորի կամ հորատանցքի միջոցով, իսկ արտահոսքի ուղղության վրա՝ երկու կետում (50-ից 100 մետր հեռավորության վրա): Այս թվերը կարող են աճել հիդրոերկրաբանական հատուկ հետազոտությունների և թափոններից արտագատվող հեղուկի՝ դեպի ստորերկրյա ջրեր

անկանխատեսելի ներթափանցումն անհապաղ կանխելու անհրաժեշտության դեպքում:

28. Աղբավայրի տարածքում հողի վիճակի դիտարկումն ու նմուշառումներն իրականացվում են աղբավայրի առնվազն սանիտարական պահպանման գոտու տարածքում՝ մոնիթորինգի ծրագրին համապատասխան:

29. Աղբավայրի տարածքում շրջակա միջավայրի վիճակի և աղտոտման նկատմամբ մոնիթորինգն իրականացվում է աղբավայրը շահագործողների, իսկ աղբավայրի շահագործումը դադարեցնելուց հետո աղբավայրը տնօրինողի միջոցներով՝ աղբավայրի մոնիթորինգի ծրագրին համապատասխան:

30. Աղբավայրը շահագործողները և տնօրինողները շրջակա միջավայրի վրա ցանկացած բացասական ազդեցության մասին, որը բացահայտվել է իրականացվող ինքնահսկման և մոնիթորինգի արդյունքում, անմիջապես գրավոր տեղեկացնում են տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայությանը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը և Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությանը, Առողջապահական և աշխատանքի, Բնապահպանության և ընդերքի, Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմիններին:

31. Աղբավայրը շահագործողներն իրենց միջոցներով ապահովում են բացասական հետևանքների կանխմանն ու վերացմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների իրականացումը, այդ թվում՝ հետևելով սույն կարգի 30-րդ կետում նշված պետական կառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրված հրահանգներին:

32. Աղբավայրի տարածքում իրականացվող մոնիթորինգը դադարեցվում է մոնիթորինգի ծրագրով նախատեսված ժամկետի ավարտից հետո: Եթե աղբավայրի մոնիթորինգի արդյունքներով պարզվում է, որ աղբավայրից վնասակար նյութերի արտանետումը և արտահոսքը շարունակվում են, ապա

մոնիթորինգի իրականացման ժամկետը երկարաձգվում է մինչև աղբավայրից վնասակար նյութերի արտանետման և արտահոսքի բացակայումը:

33. Աղբավայրի շահագործման նախատեսված ժամկետի ավարտից և սահմանված կարգով աղբավայրի փակումից հետո կամ այլ պատճառով աղբավայրի շահագործումը դադարեցնելու դեպքում աղբավայրը տնօրինողները աղբավայրում հրդեհի, մարդու առողջությանն ու շրջակա միջավայրին վտանգ սպառնացող այլ իրավիճակների մասին անմիջապես գրավոր տեղեկացնում են սույն կարգի 30-րդ կետում նշված պետական կառավարման, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման և տեսչական մարմիններին:

34. Աղբավայրի տնօրինողը ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության հետ համատեղ ապահովում են վթարային իրավիճակի բացասական հետևանքների կանխմանն ու վերացմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների իրականացումը, այդ թվում՝ հետևելով սույն կարգի 30-րդ կետում նշված պետական կառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տվյալ իրավիճակին համապատասխան տրված հրահանգներին:

35. Աղբավայրի շահագործման դադարեցումից հետո աղբավայրը տնօրինողների կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները ներառվում են Թափոնների հեռացման վայրերի ռեեստրային գրանցման թերթիկի համապատասխան բաժնում և սահմանված կարգով ներկայացվում Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն:

36. Աղբավայրը շահագործողների և տնօրինողների (աղբավայրի տարածքի սեփականատիրոջ) կողմից սույն կարգով սահմանված պահանջները չկատարվելը նախատեսում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ